Մրցույթ՝ Արմավիրի մարզի «Այգեշատի Յու. Հովհաննիսյանի անվան միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ–ի հայոց լեզու և գրականություն առարկայի /6 դասաժամ/, տեխնոլոգիա /աղջիկների խուբ/առարկայի /3 դասաժամ/ ուսուցչի թափուր տեղերի համար

Մրցույթի մասնակիցների գիտելիքների և մասնագիտական կարողությունների ստուգումն անցկացվելու է երկու փուլով՝ / գրավոր / հանրակրթական առարկայական ուսումնական ծրագրերին համապատասխան/ և բանավոր / մանկավարժական մասնագիտական գործնական հմտություններ /:

Մրցույթին մասնակցելու համար անձը հանձնաժողովին է ներկայացնում՝

1) դիմում (Ձև 1), մեկ լուսանկար 3Х4 չափսի,
2) բարձրագույն կրթությունը հավաստող փաստաթուղթ (դիպլոմ),
3) անձը հաստատող փաստաթուղթ,
4) «Հանրակրթության մասին» ՀՀ օրենքի 26-րդ հոդվածի 1-ին մասին համապատասխան՝ աշխատանքային ստաժի
վերաբերյալ տեղեկանք աշխատավայրից և աշխատանքային գրքույկի պատճենը՝ առկայության դեպքում,
5) ինքնակենսագրություն (Ձև 5),
6) այլ պետությունների քաղաքացիները՝ Հայաստանի Հանրապետությունում աշխատելու իրավունքը հավաստող
փաստաթուղթ,
7) Հայաստանի Հանրապետության արական սեռի քաղաքացիները՝ նաև զինվորական գրքույկ,
8) հրատարակված հոդվածների ցանկ կամ գիտական կոչումը հավաստող փաստաթղթեր (առկայության դեպքում),
9)որակավորման տարակարգ ունենալու դեպքում՝ հավաստող փաստաթուղթ:

Փաստաթղթերի պատճենները պետք է ներկայացնել բնօրինակների հետ:

Փաստաթղթերն ընդունվում են 2023թ. դեկտեմբերի 6-ից մինչև դեկտեմբերի 19-ը ներառյալ, ամեն օր՝ ժամը 10-14-ը բացի շաբաթ, կիրակի և տոն օրերից:
Փաստաթղթերի ընդունումը կանցկացվի՝ ըստ կարգի:

Մրցույթը տեղի կունենա **2023 թ.դեկտեմբերի 22-ին՝ ժամը 12:00-ին,** Արմավիրի մարզի <<Այգեշատի Յու. Հովհաննիսյանի անվան միջնակարգ դպրոց>> ՊՈԱԿ-ի շենքում: Տեղեկությունների համար զանգահարել՝ (+374)94-37-80-83: